Հանրային գնումների համակարգի միտումների հակիրճ ուսումնասիրություն

Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքում ներկայացված տվյալների՝ 2021թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ իրականացված գնումների արդյունքում 13966 պայմանագրերի շրջանակներում գեներացվել է շուրջ 251,3 մլրդ դրամի պարտավորություն:

Վերոնշյալ գնումներից մոտ 41%-ը կամ 5756-ը իրականացվել են ոչ մրցակցային ընթացակարգերով (մեկ անձ և հրատապ մեկ անձ) և արդյունքում գեներացվել է շուրջ 131,8 մլրդ դրամի պարտավորություն, ինչն էլ կազմում է տվյալ ժամանակահատվածի ընդհանուր գնումների շուրջ 52%-ը:

Հարկ է նշել, որ գնումների հաշվետվողականության համակարգում ներկայացված տվյալների համաձայն, կոնկրետ 2021թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակաշրջանում կնքվել է 11300 պայմանագիր շուրջ 141,9 մլրդ դրամի պարտավորությամբ, որից 3975-ը կամ 35%-ը կնքվել են ոչ մրցակցային ընթացակարգերով և գեներացրել են շուրջ 25,5 մլրդ դրամի պարտավորություն՝ կազմելով ընդհանուր կնքված պայմանագրերի 19%-ը: Արժեքային գնահատմամբ այս ոչ մրցակցային գնումների շուրջ կեսը բաժին է ընկնում հրատապության հիմքով կնքված պայմանագրերին (12,8 մլրդ դրամ), որոնց խոշոր պատվիրատուներն են հանդիսացել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (5,5 մլրդ դրամ), Էկոնոմիկայի նախարարությունը (1,83 մլրդ դրամ), Առողջապահության նախարարությունը (1,8 մլրդ դրամ), Պաշտպանության նախարարությունը (1,5 մլրդ դրամ) և Քաղաքաշինության կոմիտեն (0,9 մլրդ դրամ): Հրատապության հիմքով կնքված խոշոր պայմանագրերի շրջանակում գնման առարկա են հանդիսացել ճանապարհների նորոգման աշխատանքները, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքները, մարզերում շինարարական աշխատանքները[1], առողջապահական և լաբորատոր նյութերը, գերեզմանների կառուցման աշխատանքները, արբանյակային կապի վարձակալության ծառայությունը, անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերը, Քովիդ-19-ի շրջանակում հանրային սննդի մատուցման և հյուրանոցային ծառայությունները, Դուբայ-ԷՔՍՊՈ 2020 ցուցահանդեսի կազմակերպման ծառայությունները, անձնագրերը և այլն:

Վերջին տարիների ընթացքում հանրային գնումների ընդհանուր միտումների քանակական և արժեքային հակիրճ բնութագիրը ներկայացված է Գծապատկերներ 1 և 2-ում:

[1] Արժեքային առումով խոշոր պայմանագրեր են կնքվել հատկապես Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի տների շինարարական աշխատանքների իրականացման համար:

Գծապատկեր 1. Պետգնումների քանակական բնութագիրը 2017-2020թթ. ժամանակահատվածում



Գծապատկեր 2. Պետգնումների արժեքային բնութագիրը 2017-2020թթ. ժամանակահատվածում, մլրդ դրամ



Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերներում բերված տվյալներից, քանակական առումով ոչ մրցակցային գնումները նախորդ տարվա համեմատ կրճատվել են 2018թ., իսկ հետագա տարիների ընթացքում նկատվել է այս գնումների աճի միտում: Միևնույն ժամանակ, արժեքային առումով այս պատկերը չի պահպանվել, այն է՝ 2017թ.-ից 2019թ. ընթացքում նկատվել է ոչ մրցակցային գնումների աճի միտում, այնուհետև նվազման:

Այնուհանդերձ, հարկ է նշել, որ պետգնումների հաշվետվողականության կայքում ներկայացված տվյալներում 2020թ. առողջապահության նախարարության կողմից իրականացված Քովիդ-19 համավարակի կանխմանն ու հաղթահարմանն հետ կապված ոչ մրցակցային գնումների վերաբերյալ տվյալները ոչ ամբողջական են ներկայացված, ինչը ենթադրում է, որ 2020թ. ոչ մրցակցային գնումների քանակը և արժեքը եղել է շատ ավելի մեծ, քան ներկայացված է գծապատկերներում:

Առավել հետաքրքրական է ոչ մրցակցային գնումների կառուցվածքային ուսումնասիրությունը, որի արդյունքները ներկայացված են Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում 2017-2020թթ., %



Վերոնշյալ գծապատկերում բերված տվյալներից երևում է, որ քանակական առումով ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում ունեցել է հիմնականում նվազման միտում: Իսկ ահա արժեքային առումով նախորդ տարվա համեմատ ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում նվազել է 2018թ., այնուհետև աճել է 2019թ. և նվազել 2020թ. ընթացքում: Սակայն, ինչպես արդեն նշվել էր, Քովիդ-19 համավարակի հետ կապված ոչ մրցակցային գնումների վերաբերյալ տվյալների ոչ ամբողջական լինելու պատճառով ենթադրվում է, որ 2020թ. ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում եղել է ավելի մեծ քան ներկայացված է վերոնշյալ գծապատկերում: